ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«30» դեկտեմբերի 2016 թվականի № 138-Ն

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության և տեխնիկական անվտանգության փորձաքննությունների դրական եզրակացությունները՝

Հրամայում եմ

1. <Պասեպ ինթերնեյշնլ> ՓԲ ընկերությանը 38 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/551 թույլտվությունը՝ ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի Վանաշենի տրավերտինների տեղամասը՝ 1.X=4417210 Y=8474664, 2.X=4417474 Y=8474760, 3.X=4417448 Y=8474950, 4.X=4417272 Y=8474890, 5.X=4417132 Y=8474780 ARM-WGS-84 համակարգի կոորդինատներով եզրագծված տարածքում արդյունահանման աշխատանքներ կատարելու համար, հատկացնելով՝ 535.8 հազար մ³ պաշար, և լեռնահատկացման թիվ L-551 ակտը՝ 1.X=4417130.3 Y=8474779.6 H=966.5 (h=-21.5), 2.X=4417208.6 Y=8474661.9 H=945.2 (h=-3.2), 3.X=4417347.0 Y=8474711.0 H=929.5 (h=-2.5), 4.X=4417472.2 Y=8474656.5 H=917.0 (h=0), 5.X=4417483.4 Y=8474476.9 H=910.5 (h=0), 6.X=4417620.2 Y=8474480.9 H=908.0 (h=0), 7.X=4417619.2 Y=8474704.9 H=918.5 (h=0), 8.X=4417549.2 Y=8474803.6 H=926.5 (h=0) 9.X=4417620.9 Y=8474831.8 H=924.5 (h=0), 10.X=4417601.4 Y=8474886.6 H=927.5 (h=0) 11.X=4417541.0 Y=8474907.7 H=929.2 (h=0), 12.X=4417504.8 Y=8474869.6 H=929.7(h=0) 13.X=4417448.4 Y=8475005.0 H=930.2 (h=0), 14.X=4417224.6 Y=8474927.9 H=957.6(h=0) 15.X=4417221.3 Y=8474853.6 H=952.2 (h=0) ARM-WGS-84 համակարգի կոորդինատներով եզրագծված 13.5 հա տարածքով:

2. Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 14.1 հազար մ³ պաշար:

3. Աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում նախապատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված՝ ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի Վանաշենի տրավերտինների տեղամասի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագիրը և ծանուցել ընկերությանը՝ սույն հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու մասին.

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց հետո 10 օրվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման անդորրագրի ներկայացումից անմիջապես հետո, ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. *<Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի տնօրենին* - ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ